ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 11.03.2016թ. ԹԻՎ 32-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 16 փետրվարի 2016թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

Ա. Քալոյան ՇՇՇԲ առաջատար ինժեներ

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Հակոբյան ԷՄԾ առաջատար ինժեներ

Գ. Մանուչարյան ՇՇՇԲ առաջատար ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

Նիստին ներկա էին <<ՎԱՆԱՐԽ>> ՍՊԸ և <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ ներկայացուցիչները

Օրակարգ՝

1. Ընկերության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-03/16>> ծածկագրով ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.
2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի չափաբաժինների համար սահմանված նախահաշվային գները:

Չ/Բ	Գնման առարկան	Նախահաշվային գինը՝ ՀՀ դրամ
1	*<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի ՄՌԼ-11 պահեստի և խոհանոցի տանիքի վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների ծառայությունների ձեռքբերում*	200 000
2	*<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ <<Տե-22 Ենթակայանի բարձր և ցածր լարման բջիջների փոխարինում նորով>> նախագծա-նախահաշվային աշխատանքների ծառայությունների ձեռքբերում*	200 000

Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները՝ <<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ (ք. Վանաձոր, Բաթումի 15/27, հեռ. (094)008887), <<Կարոշիննախագիծ>> ՍՊԸ (ք. Երևան, Վաղարշյան 24/1, բն. 43, հեռ. (010)278630; 091502875), <<Էլեկտրասեվկավմոնտաժ>> ՍՊԸ (ք. Երևան, Արցախի 23/2, 0005, հեռ. (010)433212), <<ՎԱՆԱՐԽ>> ՍՊԸ (ք. Վանաձորի, Տաթևի 14, հեռ. (091)757505); (094)757505) և <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ (Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Սաֆարյան 3 նրբ., տուն 8, հեռ 094908868):

Հանձնաժողովն արձանագրվեց, որ բոլոր մասնակիցների հայտ պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան, ինչպես նաև դրանցում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց մասնակիցների գնային առաջարկները՝ առանց ԱԱՀ-ի.

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	<<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ	<<Կարոշիննախագիծ>> ՍՊԸ	<<Էլեկտրասեվկավմոնտաժ>> ՍՊԸ	<<ՎԱՆԱՐԽ>> ՍՊԸ	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
1	*<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի ՄՌԼ-11 պահեստի և խոհանոցի տանիքի վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների ծառայությունների ձեռքբերում*	*150 000*	*165 000*		*460 000*	*150 000*
2	*<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ <<Տե-22 Ենթակայանի բարձր և ցածր լարման բջիջների փոխարինում նորով>> նախագծա-նախահաշվային աշխատանքների ծառայությունների ձեռքբերում*		*198 000*	*192 000*	*350 000*	*150 000*

Վերլուծության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ 1-ին չափաբաժնով <<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ և <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ ներկայացրած գնային առաջարկները հավասար են, իսկ <<ՎԱՆԱՐԽ>> ՍՊԸ ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 1-ին հավելվածի 44-րդ կետի 5-րդ ենթակետի <<բ>> կետով, քվեարկության արդյունքում ***միաձայն որոշեց***՝

1. ***կասեցնել*** <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-03/16>> ծածկագրով Ընկերության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների գնման ընթացակարգի նիստը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում <<Վանաձորի նախագծող>> ՍՊ և <<Համաշիննախագիծ>> ՍՊ ընկերություններին էլեկտրոնային եղանակով ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստին,

2. Հանձնաժողովը ղեկավարվելով նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 1-ին հավելվածի 44-րդ կետի 5-րդ ենթակետի <<գ>> կետով (բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը), որոշեց միաժամանակյա բանակցությունների վարման նիստը նշանակել ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33 հասցեում՝ 19.02.16թ. ժամը 11.30-ին:

Ա. Քալոյան	Հանձնաժողովի նախագահ
Վ. Հակոբյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Մանուչարյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի քարտուղար